Հաստատված է

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Վարչության

17.02.2017թ
թիվ 30/21-17.02.17 որոշմամբ

Վարչության նախագահ

---------- Ա. Գալստյան

Հրապարակման ամսաթիվը «17.» «02.» 2017թ.
Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել,
մանրամասների համար՝
Հեռախոս - (37410)8686, (37410)51-09-10 (9104) - Բանկի տեղեկատու

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ
ԲԱՆԿԱՅԻՆ, ՑՊԱՀԱՆՋ ԱՎԱՆԴԱՅԻՆ ԵՎ ԷՍՔՐՈՈՒ ՀԱՇԻՎՆԵՐԻ

ԵՐԵՎԱՆ 2017

1. Անվանումը - «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
   Հասցե - Հայաստանի Հանրապետություն, 0002, ք. Երևան, Ամիրյան 23/1
   Էլեկտրոնային հասցե - bank@aeb.am
   Կայք - www.aeb.am
   Հեռախոս - (37410)8686, (37410)51-09-10 (9105)
   Ֆաքս - (37410)53-89-04

2. Բանկային հաշվի, ցպահանջ ավանդային և էսքրոու հաշվի սակագները և դրույքաչափերը.

1. Հաշվի բացում[1]	
ա/ Ֆիզիկական անձանց համար	5 000 դրամ
բ/ Իրավաբանական անձանց համար	10 000 դրամ
գ/Լրացուցիչ հաշիվների բացում	3 000 դրամ
2. Հաշվի սպասարկում, փակում	0
3. Հաշվով գործարքներ չիրականացված հաշվի սպասարկում[2]	
ա/ չեն կատարվել գործարքներ 365- ից 730 օր	10 000 դրամ ամսական
բ/ չեն կատարվել գործարքներ 731- օրից մինչև 1095 օր	15 000 դրամ ամսական
գ/ չեն կատարվել գործարքներ 1096 օր և ավելի	20 000 դրամ ամսական
4. Հաշվից քաղվածքների, վճարային փաստաթղթերի, SWIFT հաղորդագրությունների պատճենների և/կամ կրկնօրինակների, այլ տեղեկությունների և տեղեկանքների[3] տրամադրում՝ Ըստ վաղեմության ժամկետների[4]	
ա/ Մինչև 1 ամիս կատարված գործարքների համար	
* Հաշվից քաղվածքների տրամադրում[5]	0
* Վճարային փաստաթղթերի, SWIFT հաղորդագրությունների պատճենների և/կամ կրկնօրինակների, այլ տեղեկությունների և տեղեկանքների տրամադրում	1 000 դրամ
բ/ 1-ից մինչև 3 ամիս կատարված գործարքների համար	1 500 դրամ
գ/ 3-ից մինչև 1 տարի կատարված գործարքների համար	2 500 դրամ
դ/ 1 տարուց ավելի կատարված գործարքների համար	5 000 դրամ
5.Ֆիզիկական անձանց տրամադրվող տեղեկանքներ	5 000 դրամ
6. Հաշվի տնօրինման հանձնարարական[6]	5 000 դրամ ամսական
7. Կոմունալ վարձավճարների գծով	0
8. Հաշվի տնօրինում «Home bank» համակարգով[7]	
8.1 Իրավականական անձանց (անհատ ձեռնարկատերերի) համար	
ա/ Սարքի ակտիվացման վճարը չգանձելու դեպքում	5 000 դրամ ամսական
բ/ Սարքի ակտիվացման վճարը գանձելու դեպքում[7բ]	3 000 դրամ ամսական
8.2 Ֆիզիկական անձանց համար	
ա/Սարքի ակտիվացման վճարը չգանձելու դեպքում	3 000 դրամ ամսական
բ/ Սարքի ակտիվացման վճարը գանձելու դեպքում[7բ]	1 000 դրամ ամսական
8.3 Քարտի /սարքի կորստի /վնասված քի/ դեպքում	30 000 ՀՀ դրամ
9. Դրամական չեկային գրքույկների տրամադրում[8]	5 000 դրամ
10. Հաշիվների վերաբերյալ աուդիտորական հարցումների պատասխան	15 000 դրամ
11. Հաճախորդի կողմից կատարված գործառնությունների մասին հարցումներ[9]	
ա/ ՀՀ դրամ, ՌԴ ռուբլի	3 000 դրամ
բ/ Այլ արտարժույթ	15 000 դրամ
12. «VIP» սրահում հաճախորդների սպասարկում[10]	20 000 դրամ ամսական
13. Ֆիզիկական անձանց կողմից «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ում բանկային հաշվի, քարտային հաշվի, ժամկետային ավանդի, վարկային հաշվի, արժեթղթերի հաշվի և պահատեղի սպասարկման համար լիազորագրերի տրամադրում [11]	3 000 ՀՀ դրամ
14. Կանխիկ միջոցների մուտքագրում	
ա/ ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո	0
բ/ Այլ արտարժույթ	օրվա սահմանված տոկոսադրույքով
գ/ Քարտային հաշիվների համալրման, չեկերի գնման, վճարահաշվարկային համակարգերով, ավանդային հաշիվներին մուտքերի,ինչպես նաև արտարժույթի կանխիկ առք ու վաճառքի գործարքների նպատակով	0
դ/ Հաճախորդների կողմից հատուկ ընթացակարգով /համարակալված կապարակնիքներով կնքված կամ մեկանգամյա օգտագործման համարակալված պոլիէթիլենային պարկերով/ կանխիկ գումարների մուտքագրում ելնելով գումարի ծավալից	0.01% min 500 դրամ
ե)«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի մասնաճյուղերից դուրս գտնվող Cash-in տերմինալներով կատարվող գործարքների՝ կանխիկի մուտքագրման (բանկային/քարտային հաշվի համալրման) և վարկի մարման համար	50 ՀՀ դրամ (մինչև 1000 ՀՀ դրամ), 100 ՀՀ դրամ (1001-100000 ՀՀ դրամ) 200 ՀՀ դրամ (100001-400000 ՀՀ դրամ)
15. Հաճախորդի հաշվին մուտքագրված կանխիկ միջոցներից՝ կանխիկի վճարում [12]	
ա/ ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո	0
բ/ Այլ արտարժույթ	օրվա սահմանված տոկոսադրույքով
16. Կանխիկ միջոցների վճարում՝ հաճախորդի անկանխիկ միջոցներից [13]	
ա/ մինչև 30 000 դրամ	500 դրամ
բ/ 30 001 դրամ և ավելի	0.5%, min 1 000 դրամ
գ/ ԱՄՆ դոլար, ԵՎՐՈ	
դ/ Այլ արտարժույթ	

17. Էսքրոու հաշիվ[14]	
ա/ Էսքրոու հաշվի սպասարկման վարձատրություն	գործարքի գումարի 0.1% min 15 000 դրամ max 100 000 դրամ
բ/ Էսքրոու հաշվի պայմանագրում պայմանների փոփոխություն	15 000 դրամ

1. ա/ Հայաստանի Հանրապետության կենսաթոշակառու հանդիսացող ռեզիդենտ ֆիզիկական անձանց, շահույթ չհետապնդող կազմակերպությունների, պետական, պետական ոչ առևտրային, համայնքային ոչ առևտրային և հասարակական կազմակերպությունների, «Էսքրոու» հաշիվների, առարկայազուրկ մետաղական հաշիվների, սոցիալական փաթեթի հաշիվների, պետական աջակցության հաշիվների, «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ»ԲԲԸ համակարգում ԱՍԿ-ների սպասարկման նպատակով բացվող հաշիվների համար՝ անվճար:
բ/ Լրացուցիչ հաշվի բացման սակագինը գանձվում է հաշիվ ունեցող հաճաղորդի (ֆիզիկական և/կամ իրավաբանական) կողմից նոր հաշվի /հաշիվների/ բացման համար յուրաքանչյուր անգամ դիմում ներկայացնելուց:
գ/ Հաշվի բացում՝
* այլ երկրների /ոչ ՀՀ/ անձնագիր ներկայացրած ֆիզիկական անձանց համար՝ 30 000 ՀՀ դրամ,
* ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց համար՝ 50 000 ՀՀ դրամ:
2. ա/ 365 օրից, 731 օրից և 1096 օրից ավել գործառնություն չիրականացված հաշվի մնացորդը համապատասխանաբար 10 000 ՀՀ դրամին, 15 000 ՀՀ դրամին և 20 000 ՀՀ դրամին և/կամ համարժեք արտարժույթին հավասարվելուն և/կամ պակաս լինելուն պես՝ գանձելով միջնորդավճարը, ավտոմատ կերպով փակվում է տվյալ հաշիվը և դադարեցվում է հետագա ամիսների սպասարկման միջնորդավճարների գանձումը:
բ/ Սույն սակագինը տարածվում է այն քարտային հաշիվների վրա, որոնց քարտի ժամկետը լրացել է, քարտը չի վերաթողարկվել և քարտի ժամկետին նախորդող 365 և ավելի օրվա ընթացքում հաշվով գործարքներ չեն իրականացվել:
գ/ ույն սակագինը չի տարածվում օրենքով սահմանված կարգով լուծարային գործընթացում գտնվող հաշվետերերի հաշիվների, կալանքի տակ գտնվող բանկային հաշիվների և ցպահանջ անցած ժամկետային ավանդների վրա:
3. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ»ԲԲԸ-ում առնվազն 15 բանկային օր 3 000 000 ՀՀ դրամ (կամ համարժեք արտարժույթ) և ավելի գումարի ժամկետային ավանդ ունեցող ֆիզիկական, նախորդ ամսում բանկային և/կամ ժամկետային ավանդի հաշվի միջին մնացորդը 10 000 000 ՀՀ դրամը (կամ համարժեք արտարժույթը) գերազանցող իրավաբանական կամ վերջիններիս տնօրեն հանդիսացող ֆիզիկական անձանց, «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ աշխատակիցների, «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ համակարգում ուսումնա-արտադրական պրակտիկա անցած ուսանողներին պրակտիկային վերաբերվող տեղեկանքների, սոցիալական փաթեթի և պետական աջակցության հաշիվների սպասարկման նպատակով տրամադրվող տեղեկանքների համար՝ անվճար:
4. ա/ Յուրաքանչյուր գործարքից հետո, հաշվից քաղվածքների, վճարային փաստաթղթերի պատճեի և (կամ) կրկնօրինակի տրամադրման, ինչպես նաև մինչև մեկ տարի լրանալը «Home bank» համակարգով կատարված գործարքներից փաստաթղթերի կրկնօրինակի տրամադրման համար՝ անվճար:
բ/ Մեկ տարուց ավելի «Home bank» համակարգով կատարված գործարքների փաստաթղթերի կրկնօրինակի տրամադրման համար գանձվում է 1000 դրամ սակագին:
գ/ Պետական աջակցության հաշվից քաղվածքների տրամադրումը՝ անվճար:
5. Մինչև մեկ ամիս կատարված գործարքների համար քաղվածքների տրամադրումը անվճար կարող է տրամադրվել մինչև հաջորդող ամսվա 10-րդ բանկային օրը ներառյալ:
6. ա/ԱՍԿ-ների,սոցիալական փաթեթի հաշիվների սպասարկման նպատակով, Մանկական ավանդի և <<Կամավոր կուտակային ավանդի>> համալրման նպատակով՝ անվճար:
բ/Հաշվի տնօրինման հանձնարարականի կատարումից սակագին չի գանձվում, եթե հանձնարարականը կատարվել է 10 օրացուցային օրվա ընթացքում:
գ/Հաշվի տնօրինման հանձնարարականի ընթացիկ կատարման համար գանձվում է սակագին, եթե տվյալ ամսում հանձնարարականի կատարում է տեղի ունեցել:
7 ա/ Յուրաքանչյուր էլեկտրոնային ստորագրության կրիչի համար (մինչև հաշվետու ամսվա 25 տրամադրման դեպքում վճարը գանձվում է նույն ամսվա ընթացքում մեկ ամսվա համար, իսկ հաշվետու ամսվա 25-ին կամ ավելի ուշ տրամադրման դեպքում՝ հաջորդ ամսվա ընթացքում մեկ ամսվահամար):
բ/ Սարքի ակտիվացման վճարը իրավաբանական (անհատ ձեռնարկատերերի) և ֆիզիկական անձանց համար կազմում է 15 000 ՀՀ դրամ, որը գանձվում է յուրաքանչյուր սարքը տրամադրելիս: Սարքով հաշվի սպասարկման վճարը ոչ ռեզիդենտ ֆիզիկական և իրավաբանական անձանց /անհատ ձեռնարկատերերի/ և ոչ ՀՀ անձնագրով ֆիզիկական անձանց համար կազմում է 30000 ՀՀ դրամ:
գ/ Էլեկտրոնային ստորագրության կրիչի հանձման դեպքում հաշվետու ամսվա համար չի գանձվում սակագին, եթե էլեկտրոնային ստորագրության կրիչը հանձնվել է բանկին մինչև հաշվետու ամսվա 5-րդ աշխատանքային օրը:
8. ա/Գանձապետարանների սպասարկման նպատակով անվճար:
բ/ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲ Ընկերությունում սպասարկվող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից կանխիկ դրամական միջոցների ելքը դրամարկղի ելքի օրդերով իրականացնելու դեպքում գանձվում է 500 ՀՀ դրամ սակագին:
9. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ պատասխանատվություն չի կրում թղթակից բանկի կողմից պատասխան չստանալու համար:
10. Բացառությամբ այն հաճախորդների որոնք համապատասխանում են «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ»ԲԲԸ-ի կողմից ընդունված «VIP» չափանիշներին:
11. Բացառությամբ կենսաթոշակ ստանալու նպատակով բացված հաշիվների, Անհատ ձեռնարկատերերի կողմից վարկի մարման նպատակով տրված լիազորագրերի և պայմանագրով նախատեսված այլ դեպքերի:
12. Հաճախորդների հաշիվներից միջոցների կանխիկացման միջնորդավճարը հաշվարկելիս, հիմք է ընդունվում միջոցների կանխիկացման օրվան նախորդող 182 օրվա ընթացքում հաճախորդի հաշվին կանխիկ մուտքագրված և կանխիկ ելքագրված գումարների հանրագումարների տարբերությունը (սույն սակագինը չի տարածվում մանկական ավանդների, ֆիզիկական անձանց կողմից ներդրված ժամկետային ավանդների և դրանց դիմաց հաշվեգրված տոկոսների վրա): Բանկի կողմից տրամադրված վարկերը, (բացառությամբ ոսկյա իրերի և դրամական միջոցների գրավադրմամբ վարկերի, ինչպես նաև բանկի

աշխատակիցներին աշխատավարձից մարման պայմանով տրամադրված վարկերի, որոնց համար կանխիկացման սակագին չի գանձվում) համարվում են հաճախորդի հաշվին մուտքագրված անկանխիկ միջոցներ:
13. ա/ Սույն սակագինը չի տարածվում մանկական ավանդների, բանկային ցպահանջ ավանդային հաշիվներին վճարված տոկոսագումարների, ֆիզիկական անձանց կողմից ներդրված ժամկետային ավանդների դիմաց հաշվեգրված տոկոսների, ոսկյա իրերի, դրամական միջոցների գրավադրմամբ տրամադրվող վարկերի, բանկի աշխատակիցներին աշխատավարձի ապահովմամբ տրամադրված վարկերի, ինչպես նաև «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի կողմից տեղադրված POS տերմինալներով իրականացված գործարքներից առաջացած անկախիկ միջոցների կանխիկացման վրա:

բ/ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ»ԲԲԸ Արցախ մասնաճյուղի կողմից ֆիզիկական անձանց անուններով ՀՀ դրամով փողանցվող գումարների համար անվճար:

գ/ սույն սակագինը չի տարածվում իրաբանական անձ հանդիսացող հաճաղորդների կողմից բանկի համապատասխան բազայի միջոցով տվյալ օրվա ընթացքում վճարված կոմունալ վճարների նպատակով կանխիկացվող գումարների վրա:

դ/ Բարեգործական կազմակերպությունների համար անվճար:

ե) Սույն սակագինը չի տարածվում սոցիալական փաթեթի հաշիվներից կանխիկացվող գումարների վրա:
14. Էսքրոու հաշվի վրա դեպոնացվում են անշարժ և/կամ շարժական գույքի ձեռք բերման համար վաճառողին (շահառուին) վճարման ենթակա գնողի (վճարողի) կողմից մուտք արված գումարները (էսքրոու միջոցները)՝ որպես գործարքի կատարման երաշխիք: Էսքրոու հաշվին մուտքագրված Էսքրոու միջոցները Բանկը (Էսքրոու գործակալը) «Էսքրոու» պայմանագրով սահմանված կարգով կարող է վճարել էսքրոու միջոցների հասցեատիրոջը՝ «Էսքրոու» պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում «Էսքրոու» պայմանագրով սահմանված փաստաթուղթը Բանկին (Էսքրոու գործակալին) ներկայացնելու դեպքում կամ էսքրոու միջոցներ մուտքագրողի կողմից Բանկին (Էսքրոու գործակալին) էսքրոու միջոցները էսքրոու միջոցների հասցեատիրոջը վճարելու վերաբերյալ գրավոր հանձնարարական տրամադրելու դեպքում:

14.1. «Էսքրոու» պայմանագրով սահմանված ժամկետներում «Էսքրոու» պայմանագրով սահմանված փաստաթուղթը կամ էսքրոու միջոցներ մուտքագրողի կողմից էսքրոու միջոցները էսքրոու միջոցների հասցեատիրոջը վճարելու վերաբերյալ գրավոր հանձնարարական Բանկին (Էսքրոու գործակալին) չներկայացվելու դեպքում էսքրոու հաշիվը ձևակերպվում է որպես էսքրոու միջոցներ մուտքագրողի բանկային հաշիվ՝ վերջինիս կողմից այդ հաշվի միջոցները տնօրինելու իրավունքով:
Էսքրոու հաշվով սույն կետում նշվածից բացի այլ բանկային գործառնություններ չեն իրականացվում, եթե այլ բան չի պահանջվում ՀՀ օրենսդրությամբ:
Էսքրոու հաշվի մնացորդի դիմաց հաշվարկվում է տարեկան 0% տոկոսադրույք:
Էսքրոու հաշիվների բացման նվազագույն սկզբնական գումարի սահմանափակում չկա: Էսքրոու պայմանագրի կնքման պահին Բանկին (Էսքրոու գործակալին) վճարվում է Բանկի սակագներով սահմանված Բանկի վարձատրության նվազագույն գումարը, որը ներառվում է Էսքրոու վարձատրության մեջ:
Վճարվող տոկոսները ենթակա են հարկման «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված չափով:
Էսքրոու պայմանագրի կնքման պահից երեք բանկային օրվա ընթացքում Էսքրոու հաշվին Էսքրոու միջոցները չմուտքագրվելու կամ պակաս մուտքագրվելու և մինչև հաջորդ բանկային օրն ամբողջությամբ չլրացվելու դեպքում՝ պայմանագիրը համարվում է լուծված:
Հաշվի պայմանագրի լուծումը հիմք է հաշիվը փակելու համար: Էսքրոու պայմանագրի կնքման պահին Բանկին (Էսքրոու գործակալին) վճարված Բանկի սակագներով սահմանված Բանկի վարձատրության նվազագույն գումարը որպես Վճարողի կողմից վճարման ենթակա տուգանք պահվում է Էսքրոու գործակալի կողմից:

3. Բանկը հաճախորդի Բանկային հաշվին, ցպահանջ ավանդային և Էսքրոու հաշվին մուտքագրում է ստացվող դրամական միջոցները, կատարում է հաշվից փոխանցումներ, տալիս համապատասխան գումարներ և իրականացնում այլ վճարահաշվարկային գործառնություններ Հաճախորդի կամ նրա կողմից լիազորված անձի հանձնարարությամբ:

4. Բանկային, ցպահանջ ավանդային և Էսքրոու հաշիվներին առկա դրամական միջոցների համար, եթե վճարային քարտերով սպասարկվող հաշիվների տեղեկատվական ամփոփագրերով այլ տոկոսի չափ չի սահմանվել, հաշվարկվում է տարեկան տոկոսադրույք[1].

Տարեկան պարզ տոկոսադրույքի դեպքում

ՀՀ դրամ	Տոկոսադրույք
ա/ 0-ից 20 000 000 ՀՀ դրամ	0%
գ/ 20 000 001-ից 50 000 000 ՀՀ դրամ	1%
դ/ 50 000 001-ից ավել	2%

հաշվարկներում տարին ընդունվում է 365 օր, նահանջ տարվա համար 366 օր

Տարեկան տոկոսային եկամտաբերության դեպքում*.

ՀՀ դրամ	Տոկոսադրույք
0-ից 20,000,000	0.0%
20,000,001-50,000,000	1.0%
50,000,001-ից ավելի	2.02%

տոկոսադրույքները հաշվարկվում է տարին ընդունելով 365 օր

*Ավանդների տարեկան տոկոսային եկամտաբերությունը հաշվարկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով՝ ելնելով հետևյալ բանաձևից՝

$$APY = (1 + r / n)^n - 1$$

որտեղ՝

1) APY – տարեկան տոկոսային եկամտաբերությունն է:

2) r – տարեկան պարզ տոկոսադրույքն է:

3) n – մեկ տարվա ընթացքում տոկոսագումարների կապիտալացման հաճախականությունն է:

1. Տոկոսները հաշվարկվում են հաշվետու ամսվա ընթացքում բանկային, ցպահանջ և/կամ Էսքրոու հաշվում առկա դրամական միջոցների միջին օրական կտրվածքով և վճարվում են հաշվետու ամսվան հաջորդող ամսվա առաջին աշխատանքային օրը: Ընդ որում.

- եթե բանկային, ցպահանջ և/կամ Էսքրոու հաշիվը բացվել է և/կամ հաշվին միջոցները գոյացել են հաշվետու ամսվա ընթացքում, ապա միջին օրական տոկոսների հաշվարկն իրականացվում է հաշվետու ամսվա օրացուցային օրերի հաշվարկով,
- եթե հաշվետու ամսվա ընթացքում բանկային, ցպահանջ և/կամ Էսքրոու հաշիվը փակվել է, ապա այդ ամսվա համար տոկոսներ չեն վճարվում:

«ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ ՀԱՇՎՈՒՄ ԱՌԿԱ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՅՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԵԿԱՄՈՒՏ ԿՏԱՆԱՅԻՔ ԴՈՒՔ, ԵԹԵ ՁԵՐ ԱՎԱՆԴԻ ԴԻՄԱՑ ՍՏԱՑՎԱԾ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՎԵՐԱՆԵՐԴՆԵԻՔ ԱՎԱՆԴԻ ՏԵՍՔՈՎ: ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԿԱՐՈՂ ԵՔ ԳՏՆԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՅՔՈՒՄ www.aeb.am »

5. Բանկն իրավունք ունի փոփոխել բանկային, ցպահանջ ավանդային և Էսքրոու հաշիվների դիմաց վճարվող տոկոսների չափը:

6.

ՀՀ դրամ

տարեկան 1.0% տոկոսադրույք		տարեկան 2.0% տոկոսադրույք	
ամսվա միջին օրական մնացորդ	ստացվելիք տոկոսներ (31 օրում)	ամսվա միջին օրական մնացորդ	ստացվելիք տոկոսներ (31 օրում)
15,000,000.0	11,465.8	30,000,000.0	45,863.0

- հաշվարկներում տարին ընդունվել է 365 օր, ընդ որում տոկոսագումարները հաշվարկված են հաշվի առած եկամտահարկը:

7. Պայմանագրից բխող վեճերի առաջացման դեպքում հաճախորդը գրավոր դիմում է բանկին և 10 աշխատանքային օրվա ընթացքում հաճախորդին տրվում է դիմումի վերաբերյալ պատասխան: Պատասխանի հետ համաձայն չլինելու դեպքում հաճախորդը իրավունք ունի դիմել դատարան կամ ֆինանսական համակարգի հաշտարարին օրենքով սահմանված կարգով:

8. Բանկային, ցպահանջ ավանդային և Էսքրոու հաշիվների բացման նվազագույն սկզբնական գումարի սահմանափակում չկա, իսկ վճարվող տոկոսները ենթակա են հարկման «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված չափով:

9. Հաճախորդը հաշիվ բացելու համար Բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝
   9.1 անձը հաստատող փաստաթուղթ,
   9.2 սոցիալական քարտ (ՀՀ քաղաքացիների համար),

9.3 հաշվի (հաշիվների) միջոցները տնօրինելու լիազորված անձի դեպքում՝ լիազորագիր վավերացված նոտարի կողմից կամ սահմանված կարգով տրված Բանկում անձամբ հաճախորդի կողմից: Համատեղ հաշվի դեպքում սույն կետով սահմանված կարգով լիազորագիր են տալիս հաշվետեր բոլոր ֆիզիկական անձինք:

10. Բանկն առնվազն երեսնօրյա պարբերականությամբ հաշվետիրոջը տրամադրում է իր հաշվի վերաբերյալ քաղվածք Բանկային հաշվի պայմանագրով սահմանված եղանակով, բացառությամբ այն դեպքի, երբ հաշվետու ժամանակաշրջանում տվյալ հաշիվը չի դեբետագրվել կամ կրեդիտագրվել, բացի այդ հաճախորդի կողմից պահանջ ներկայացնելու դեպքում 5-օրյա ժամկետում տրամադրել հաշվի քաղվածք բանկի հայտարարած Սակագներով:

11. Բանկը կարող է հրաժարվել պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց այդ մասին հաճախորդին մեկ ամիս առաջ ծանուցելուց հետո, որով համարվում է պայմանագիրը լուծված՝ հետևյալ հիմքերի առկայության դեպքում՝
    11.1 մեկ տարվա ընթացքում տվյալ հաշվով գործառնությունների և հաշվում դրամական միջոցների բացակայության դեպքում:
    11.2 Հաշվի պայմանագրով հաճախորդի ստանձնած պարտավորությունների չկատարման դեպքում:
    11.3 Հաճախորդի հաշվում պահվող դրամական միջոցների գումարը պակաս է Բանկի կողմից սակագներով սահմանված նվազագույն չափից և նման գումարը չի վերականգնվել այդ մասին Բանկի կողմից զգուշացման օրվանից մեկ ամսվա ընթացքում:
    11.4 օրենքով սահմանված այլ դեպքերում:

Հաշվի պայմանագրի լուծումը հիմք է հաճախորդի հաշիվը փակելու համար: Հաշվում եղած դրամական միջոցների մնացորդը տրվում է հաճախորդին կամ նրա ցուցումով փոխանցվում է այլ հաշիվ, հաճախորդի գրավոր դիմումն ստանալուց ոչ ուշ, քան յոթ օրվա ընթացքում:
Բանկը պատշաճ միջոցներ է ձեռնարկում հաճախորդի հաշվում առկա դրամական միջոցների մնացորդի և դրա հաճախորդի կողմից ստացման անհրաժեշտության վերաբերյալ հաճախորդին տեղեկացնելու ուղղությամբ՝ օգտագործելով հաճախորդի հետ կապի միջոցների վերաբերյալ Բանկում առկա տեղեկատվությունը:
Հաճախորդի հաշիվը ենթակա չէ փակման մինչև հաճախորդի Բանկ ներկայանալը: Հաճախորդի Բանկ ներկայանալու դեպքում միջոցները վերադարձվում են հաճախորդին իր դիմումի հիման վրա, եթե միջոցների տնօրինման վրա օրենսդրությամբ սահմանված կարգով սահմանափակումներ չկան:

12. Հաշիվը և դրանում եղած դրամական միջոցները տնօրինելու հաշվետիրոջ իրավունքները կարող են սահմանափակվել դատարանի վճռով, դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների կամ հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման և բանկային հաշվի պայմանագրով սահմանված դեպքերում:

13. Առանց հաշվետիրոջ կարգադրության հաշվից դրամական միջոցների բռնագանձումը կարող է իրականացվել դատարանի վճռով, դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների և հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա և բանկային հաշվի պայմանագրով սահմանված դեպքերում:

14. Ավանդները երաշխավորվում են «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի համաձայն.
    - ՀՀ դրամով ավանդների դեպքում՝ մինչև 10.0 մլն դրամի չափով,
    - արտարժութային ավանդների դեպքում՝ մինչև 5.0 մլն դրամի չափով,
    - ՀՀ դրամով և արտարժույթով ավանդների դեպքում, եթե դրամային ավանդը մեծ է 5.0 մլն դրամից, ապա երաշխավորվում է միայն դրամային ավանդը՝ մինչև 10.0 մլն դրամով,

- ՀՀ դրամով և արտարժույթով ավանդների դեպքում, եթե դրամային ավանդը պակաս է 5.0 մլն դրամից, ապա երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժութային ավանդը՝ 5.0 մլն դրամի և հատուցված դրամային ավանդի տարբերության չափով: